ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1062. Իրավաբանական անձի կամ քաղաքացու պատասխանատվությունն իր աշխատողի կամ իր կողմից օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքների ներգրավված կամավորի պատճառած վնասի համար

1. Իրավաբանական անձը կամ քաղաքացին հատուցում է իր աշխատողի կամ իր կողմից օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքների ներգրավված կամավորի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) կամ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս պատճառված վնասը:

Հոդված 1074. Վնասը հատուցած անձանց հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքը

1. Այլ անձի (աշխատողի՝ ծառայողական, պաշտոնեական կամ այլ աշխատանքային պարտականությունները կատարելիս, տրանսպորտային միջոցներ վարելիս և այլն, ինչպես նաև իր կողմից օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանքների ներգրավված կամավորի՝ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելիս) պատճառած վնասը հատուցած անձը հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի այդ անձի նկատմամբ՝ իր վճարած հատուցման չափով, եթե այլ չափ սահմանված չէ օրենքով:

Հոդված 1077. Պայմանագրային պարտավորություններ կամ այլ պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը

Պայմանագրային պարտավորություններ, ինչպես նաև զինվորական ծառայություն, ոստիկանական ծառայություն և այլ համապատասխան պարտականություններ կամ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականություններ կատարելիս քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցվում է սույն գլխով նախատեսված կանոններով, եթե պատասխանատվության ավելի բարձր չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: